ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՊՀ հիմնադրամ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները

Ղեկավար՝ ԳԹ դոցենտ Սարգսյան Շողիկ _____

Դասվար՝ Չարխիֆալակյան Անահիտ Սուրենի

Գյումրի 2022

Ներածություն

Հետազոտության թեման՝ «Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպ- ման մեթոդները», իր մեջ ներառում է տարրական դասարաններում ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն խթանող մեթոդների ուսումնասիրումը:

Կրթությունը անձի որակական հատկանիշ է: Սովորել ցանկանալը և սովորել կարողանալը եղել և մնում են որպես կրթության գերխնդիրներ: Դրանց իրականացումը հնարավոր է միայն աշխատանքների ճիշտ պլանավորումով՝ ուսումնառության հենց առաջին օրվանից: Ուսումնառության հիմնաքար է համարվում ընթերցողական կարողությունների ձևավորումը: Դա էլ սովորել ցանկանալու և սովորել կարողանալու հիմնական նախապայմանն է: Ընթերցելու հմտություններին տիրապետելը նպաստում է արդյունավետ ուսուցմանը ուսումնառության բոլոր աստիճաններում: Ընթերցողական կարողություններ մշակելու համար ուսուցիչն անգնահատելի ջանքեր է գործադրում: Հաճախ տառաճանաչ դարձած առաջին դասարանցին կորցնում է հետաքրքրությունն ընթերցելու հանդեպ և այն համարում ամենադժվար ու ձանձրալի աշխատանքը:

Ըստ ընթերցանության մեթոդիկայի՝ լավ ընթերցել հասկացությունը ենթադրում է հետևյալ բաղադրիչները.

- ճիշտ կարդալ
- հասկանալով կարդալ
- սահուն կարդալ
- արտահայտիչ կարդալ
- արագ կարդալ

Այս հատկանիշների պահպանմամբ՝ ընթերցանությունը պետք է դառնա ակտիվ գործընթաց, որն ստիպում է մտածել ընթերցվող նյութի մասին:

Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակը կարդալ սովորեցնելն է և ընթերցողական կարողությունների ձևավորումը:

Սովորողների ընթերցողական կարողությունների ձևավորման նպատակով տարբեր ուսուցիչներ կիրառում են տարբեր մեթոդներ ու հնարներ: Դրանցից մի քանիսը ստորև ներկայացված են :

Ընթերցանության կարողության ձևավորման մեթոդները

Ընթերցելու կարողությունը , ինչպես գիտենք, ընդգրկում է երկու կողմ՝ ընթերցանության տեխնիկան և ընթերցածի բովանդակության ընկալումը:

Ընթերցանության տեխնիկան գիտելիքի, ինչպես նաև հետագա ուսումնական կարողությունների հիմքն է, քանի որ բովանդակության լիարժեք ընկալում հնարավոր է տեխնիկապես վարժ ընթերցելու դեպքում միայն: Եթե երեխան վատ է կարդում, բնականաբար չի ցանկանում զբաղվել ընթերցանությամբ: Մյուս կողմից՝ քիչ կարդալու պարագայում չի կարող լավ կարդալ, քանի որ կարողությունը զարգացնելու հնարավորություններն են սահմանափակ:

Բացի այդ, ընթերցանության բովանդակության ընկալումն էլ իր հերթին կարող է խթանող դեր կատարել (հետաքրքի՛ր է), մղել ընթերցանության, ինչի արդյունքում էլ բարելավվում է տեխնիկան:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ են այնպիսի մեթոդներ և գործիքներ, որոնք երեխայի մոտ կարդալու ցանկություն կառաջացնեն, կմղեն նրան ինքնուրույն ընթերցանության:

Ընթերցանության կարողության զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցից, և այն սերտորեն կապված է մյուս առարկաների յուրացման գործընթացին :

Տարվա ընթացքում կարելի է ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն խթանող մի շարք մեթոդներ կիրառել: Ինչպիսիք են.

- ✓ գեղարվեստական գրականության ընթերցման մեթոդը,
- ✓ ուղղորդվող կամ ընդհատումներով ընթերցանության մեթոդը,
- ✓ Ռիվինի մեթոդը,
- ✓ Աուդիոգրքի մեթոդը:

Գեղարվեստական գրականության ընթերցման մեթոդ

Կրտսեր դպրոցական տարիքում ընթերցանության կարողության ձևավորմանը նպաստում է հատկապես գեղարվեստական գրականության ընթերցանությունը: Հանրահայտ է, որ շատ ժամանակակից դպրոցականներ չեն սիրում և չեն ուզում կարդալ գեղարվեստական գրականություն: Լավագույն դեպքում նրանք ընդունակ են զբաղվելու տեղեկատվական նյութերի ընթերցանությամբ, որի դեպքում ուսուցչի հանձնարարությամբ աշակերտները որոնում են, գտնում և կարդում են այս կամ այն տեղեկատվությունը: Անշուշտ, սա ևս ընթերցանության տեսակ է, ընթերցողական կարողությունը զարգացնող միջոց, բայց նման ընթերցանությունը չի զարգացնում մարդու զգացմունքային ոլորտը, այն թույլ չի տալիս մտածել այնպիսի երևույթների մասին, ինչպիսիք են բարին և չարը, ուրախությունը և երջանկությունը, սերը, ատելությունն և այլն:

Գեղարվեստական գրականության ընթերցանության ժամանակ ընթեցողն իր մեջ բացահայտում է այն զգացմունքները և մտքերը, որոնք թաքնված են իր հոգում, իսկ զգացմունքայնությունը նպաստում է կարդալու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, կարդացածը հեշտությամբ ընկալելուն:

Որպեսզի գեղարվեստական գրականության ընթերցման գործընթացը լինի արդյունավետ, անհրաժեշտ է աշակերտների մեջ զարգացնել.

- կարդացածը հասկանալու համար անհրաժեշտ հարցեր ձևավորելու կարողություն,
- առաջադրված հարցերի հնարավոր պատասխանները գուշակելու ունակություն,
- սեփական տեսակետն ազատ, անկաշկանդ արտահայտելու կարողություն,
- ստեղծագործության ենթատեքստի մեջ թափանցելու, նրա էությունը հասկանալու կայուն մոտիվացիա:

Հենց այս կարողություններն են սովորողներին հնարավորություն տալիս հասկանալ ընթերցածի իմաստը:

Ուղղորդվող կամ ընդհատումներով ընթերցանության մեթոդը

Ուղղորդվող (կամ ընդհատումներով) ընթերցանության‰ մեթոդը հնարավորություն է տալիս երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնել ընթերցանության բուն գործընթացի նկատմամբ: Մեթոդի հիմքում ընկած է ընթերցանության գործընթացի դիտարկումը: Ի վերջո, ինչպե՞ս են կարդում հմուտ, ընթերցողական կուլտուրային տիրապետող մարդիկ: Կարդում են տեքստի մի հատված, դադար են տալիս՝ մտքում ծանրութեթև անելու, իրենք իրենց հարցեր տալու, պատասխաններ որոնելու, շարունակության մասին կանխատեսումներ անելու նպատակով:

Այս կարողությունը, սակայն, հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա էլ անում է ուղղորդվող ընթերցանության մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով:

Ընդհատված ընթերցանության մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն:

Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի: Յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը:

Կարևոր է, թե որտեղ կընդհատվի հեքիաթը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ հեքիաթի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում: Կարևոր է նաև նախապես մտածել այն հարցերը, առաջադրանքները, որոնք պետք է տրվեն դադարների ժամանակ:

Չնայած նրան, որ մեթոդը բավական արդյունավետ է, սակայն այն կիրառելի է միայն դասարանական աշխատանքում: Ըստ այդմ էլ կարող ենք եզրակացնել, որ միայն այս մեթոդի կիրառումը բավական չէ, որ սովորողների մոտ ընթերցանության կարողություններ ձևավորվեն:

Ռիվինի մեթոդ

Ավանդական մեթոդներով դասընթացն իրականացնելիս ուսուցիչն աշխատում է բազմաթիվ աշակերտների հետ, որոնք ունեն կարդալու կարողության տարբեր մակարդակներ: Ակնհայտ է, որ նման դեպքում դասի ընթացքը դառնում է ծանծրալի այն աշակերտների համար, ովքեր ավելի արագ են յուրացնում ուսումնական նյութը:

Ինչպես ցույց է տալիս մանկավարժական պրակտիկան, խմբային գործունեության ժամանակ ուսումնական աշխատանքի ողջ ծանրությունը սովորաբար ընկնում է առավել ակտիվ և ընդունակ աշակերտների վրա: Պասիվ, ոչ համարձակ երեխաները նման պայմաններում դարձյալ մնում են ստվերում: Ռիվինի մեթոդիկայով աշխատանքի կազմակերպումը վերացնում է այդ թերությունը: Աշխատելով փոփոխական կազմով զույգերում՝ միևնույն աշակերտը մի դեպքում կարող է իր կարողություններով գերազանցել ընկերոջը, մեկ այլ դեպքում՝ հետ մնալ նրանից: Երկու դեպքում էլ փոխազդեցության բնույթն այնպիսին է, որ նրանում ներգրավված աշակերտը չի մնում պասիվ հայեցողական վիճակում, այլ դառնում է ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից:

Ի տարբերություն զույգային աշխատանքի՝ ընդհանուր ճակատով աշխատանքի կազմակերպման պայմաններում աշակերտներիակտիվության դրսևորման հնարավորությունները նկատելի չափով նվազում են:

Ռիվինի մեթոդով աշխատելիս յուրաքանչյուր աշակերտ ստանում է թեմա և մշակում է այն ըստ պարբերությունների փոփոխական կազմով զույգերում: Յուրաքանչյուր պարբերության մշակման համար աշակերտը զուգընկեր է գտնում, որի հետ կարդում, քննարկում, պարզաբանում և վերնագրում է պարբերության բովանդակությունը: Վերնագիրը գրանցում է տետրում և նույն ձևով օգնում է իր ընկերոջն ըմբռնել իր պարբերությունը, վերնագրել և վերնագիրը գրանցել տետրում: Մյուս պարբերությունը այլ զույգի հետ քննարկելուց առաջ աշակերտը պատմում է այն պարբերությունների բովանդակությունը, որն արդեն քննարկել է այլ աշակերտների հետ (մշակված պարբերությունները աշակերտը կարող է վերարտադրել՝ օգտվելով գրառված վերնագրերից), որից հետո անցնում այն պարբերությանը, որը պետք է քննարկի այդ աշակերտի հետ:

Ռիվինի մեթոդիկայով աշխատանքի սկզբնական փուլում, երբ երեխաները դեռ աշխատելու բավարար հմտություններ չունեն, թեմաների կրկնությունը նպատակահարմար է, քանի որ թույլ է տալիս ուսուցչին սովորողների աշխատանքի

համեմատական վերլուծություն կատարել և մեթոդիկայի յուրացումն ավելի արդյունավետ իրականացնել:

Ռիվինի մեթոդիկայով կոլեկտիվ պարապմունքների մեկնարկը պահանջում է աշխատանքի հատուկ կազմակերպում, քանի որ սովորողները ոչ միայն ուսումնասիրում են նոր նյութը, այլև յուրացնում են մեթոդը: Ուսուցման հաջողությունը կախված է այն բանից, թե որքանով են աշակերտները տիրապետում երկխոսություն վարելու արվեստին: Իսկ այդ արվեստը նրանք ձեռք են բերում հենց մեթոդիկայի երկարատև կիրառման գործընթացում:

Աշխատանքի ընթացքում հաճախ է պատահում, երբ աշակերտներից մեկը զանազան հարցեր տալով մյուսին, վերջինիս վերապատմումը վերածում է ուսուցման: Արդյունքում աշխատանքը այդ զույգում երկարում է և դասագործընթացի ընթացքում այդ աշակերտները քիչ թվով աշակերտների հետ են աշխատում: Նկատելի է նաև, որ զույգում աշխատող աշակերտներից մեկը, ծանոթ լինելով զուգընկերոջ թեմային, խանգարում է նրան՝ փորձելով անձամբ վերապատմել բնագրի բովանդակությունը:

Այս դեպքերում պետք է պահանջել, որ աշակերտները մի փոքր հանդուրժողականություն դրսևորեն: Ոչ թե անձամբ վերարտադրեն, այլ հարցերի միջոցով օգնեն ընկերոջը վերարտադրելու բնագրի բովանդակությունը:

Ռիվինի մեթոդով աշխատելու արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում է ընթերցանության կարողություններ, ինչպես նաև հարցաշար կազմելու, գլխավորը երկրորդականից տարբերելու, բնագրի փոքրիկ պարբերությունների բովանդակությունն ամփոփ ներկայացնելու, մտքեր փոխանակելու, բանավիճելու, միմյանց օգնելու, շշուկով խոսելու կարողություններ:

Աուդիոգրքի մեթոդ

Գերմանացի փորձագետներն ընթերցանությունը համարում են երիտասարդության յուրօրինակ կենսահեղուկ: Նրանք կոչ են անում ցանկացած տարիքում չհրաժարվել գիրք կարդալուց. ընթերցանությունն օգնում է զարգացնելու իմացական գործընթացները, կենտրոնանալու ունակությունը, հարստացնում է բառապաշարը, զարգացնում է կապակցված խոսքը...

Ընթերցանության ազդեցությունն ավելի ուժեղանում է, երբ հնարավորություն է լինում տպավորություններով կիսվելու այլ մարդկանց հետ: Որքան էլ բազմազան լինեն տեղեկատվության աղբյուրները, միևնույն է, գիրքը մարդու համար գիտելիքի, տեղեկատվության անփոխարինելի աղբյուր է: Ծնողների, ուսուցիչների և ընդհանրապես բոլոր մեծերի հիմնական խնդիրներից մեկն է՝ մատաղ սերնդի մեջ ձևավորել սեր գրքի նկատմամբ, գրքի հետ անընդհատ առնչվելու, նոր գիտելիքներ քաղելու պատրաստակամություն և պահանջմունք:

Հնում երեխաները կարդալ ու գրել սովորում էին կրոնական բովանդակություն ունեցող եկեղեցական գրքերից, որոնցից նրանք ոչինչ (կամ համարյա ոչինչ) չէին հասկանում և, բնականաբար, խուսափում էին կարդալ: Աստիճանաբար ծագում է հետաքրքիր ու հասկանալի գրքերի պահանջ, և 1776 թվականին Գերմանիայում ստեղծվում է մանկական առաջին ընթերցարանը....

Հայերեն առաջին մանկական ընթերցարանը հրատարակվել է Վենետիկում, 1824 թվականին՝ «Վարժություն մանկանց» վերնագրով:

Այն սերունդը, որի համար գեղարվեստական գրականության ընթերցումը ժամանցի հիմնական միջոց էր, կարող է հիշել՝ ինչպես էին ծնողները, ավագ քույրերն ու եղբայրները գիրք կարդում փոքր տարիքից, և այսօր՝ թվային տեխնոլոգիաների բազմազանության պայմաններում, դժվար թե փոխեն իրենց պատկերացումն այն մասին, որ գիրքը կարդալու համար է, ոչ լսելու: Չնայած որ, աուդիոհեքիաթներ լսում էին դեռևս մեր ծնողները՝ ոչ MP3 ձևաչափով, այլ վինիլային սկավառակներով: Ոչ բոլոր մեծերն են փորձում հասկանալ՝ արդյոք լավ բան է աուդիոգիրքը և արդյոք այն անհրաժեշտ է երեխային:

Ձայնագրությունը մարդու վրա ազդելու միջոցներից մեկն է՝ կապված ձայների զարմանալի աշխարհի հետ: Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել (Կ. Տիխոմիրովա և ուրիշներ), որ բառերը հուզականորեն ավելի ազդեցիկ են, քան պատկերները:

Ձայնագրությունը, որպես տեղեկատվության միջոց, անհրաժեշտ է դիտարկել երկուտեսանկյունից՝ մեծահասակների, ովքեր երեխաներին դրանց միջոցով նոր գիտելիքներ են հաղորդում, և երեխաների, ովքեր ձայնագրությունների միջոցով ադապտացվում են շրջապատող աշխարհին:

Ձայնագրությունները կարող են տարբեր լինել՝ երաժշտություն, բեմականացում, վավերագրություն, հարցազրույց, բնաձայներ, գրքեր և այլն: Կանգ առնենք աուդիոգրքի վրա՝ փորձելով պատասխանել մի շարք հարցերի. ի՞նչ է դա, ինչպե՞ս է դա խթանում ընթերցանության կարողությունները....

Համակարգիչների առաջացման հետ մեկտեղ ստեղծվեցին նաև առաջին էլեկտրոնային գրքերը, հետո արդեն՝ գրքերի ձայնագրված տարբերակները՝ աուդիոգրքերը: Առաջին աուդիոգրքերը լույս են տեսել 1932 թվականին, ԱՄՆում՝ կույրերի և վատ տեսնողների համար: 1952 թվականին աուդիոգրքերի մասսայական գործածության սկիզբ դրվեց հիմնականում վարորդների, երկար ճանապարհորդությունների մեկնող մարդկանց շրջանում: Այսօր արդեն աուդիոգրքերը կիրառվում են ամենուր և հասարակության ամենատարբեր շերտերի կողմից:

Իսկ ի՞նչ առավելություններ և սահմանափակումներ ունի աուդիոգիրքը:

Զարգացնում է երևակայությունը: Մենք մանկուց երեխաների համար գրքեր ենք կարդում: Օրինակ, կարելի է ասել, որ մայրը երեխային հեքիաթներին ծանոթացնում է բարուրից: Հետագայում, երբ երեխան մեծանում է, իրեն հետաքրքրում է նկարների դիտումը ընթերցանության ընթացքում: Աուդիոգիրքը զրկում է նրան այդ հնարավորությունից,սակայն պարգևում է ոչ պակաս կարևոր մի բան՝ զարգացնում է երևակայությունը: Այդ պարագայում Մոխրոտիկին կարելի է հագցնել ցանկացած զգեստ, իսկ Գնդլիկ Բոքոնիկը կունենա դեմքի ցանկացած արտահայտություն...

Զարգացնում է լսողական հիշողությունը: Երեխան սովորում է հիշել ոչ միայն կարևոր տեղեկություններ, այլ նաև սովորում է ուշադրություն դարձնել մանրուքներին, քանզի ստեղծագործությունն այնքան է կլանում լսողին, որ նա տեղափոխվում է այնտեղ՝ ապրելով յուրաքանչյուր լսած բառն ու իրադրությունը: Հետագայում նա անհրաժեշտության դեպքում կարողանում է ստույգ վերարտադրել լսածը: Այդ կարողության զարգացումը մեծ հաջողությունների երաշխիք կարող է հանդիսանալ հասուն կյանքում:

Ձևավորում է ճիշտ խոսքը: Աուդիոգիրքը լավ գործիք է երեխայի գրագետ, ճիշտ և գեղեցիկ խոսքի ձևավորման, այդ թվում՝ շեշտադրման, առոգանության և այլնի համար: Աուդիոգրքի ընթերցողը լավ արտասանություն ունի, գրագետ խոսք, այդ

պատճառով ստեղծագործության արտահայտչականության, «տրամադրության» արտացոլումը նա անում է բարձր մակարդակով՝ պահպանելով ուղղախոսության կանոնները: Դա հատկապես կարևոր է փոքր երեխաների համար, որոնց հետ սովորաբար սվսվախոսում են: Բոլոր դեպքերում, առօրյա կյանքում երեխան լսում է այլ խոսք, ավելի պարզ խոսակցական բառաձևեր՝ երբեմն բարբառային կամ ժարգոնային բառերով շաղախված: Գրական լեզուն ազդում է գրագետ մտավորականի անձի ձևավորմանը:

Արդյունավետ է ուսուցման համար: Հոգեբանները ապացուցել են, որ տեղեկատվության ունկնդրումն ինչ-որ գործերով զբաղվելու ընթացքում՝ չափազանց արդյունավետ միջոց է այն հիշելու համար: «Ֆոնային» հնչողությունը հիշվում է ենթագիտակցական մակարդակի վրա, հատկապես՝ հանգստի ժամանակ: Այդ մեթոդը շատ արդյունավետ օգտագործվում է հատկապես օտար լեզուների ուսուցման ժամանակ և լայն մասսայականություն է վայելում մեծահասակների ուսուցման մեջ: Այդ դեպքում ինչո՞ւ չկիրառել այն երեխաների ուսուցման գործընթացում: Միացրեք սկավառակն այն ժամանակ, երբ նա խաղում է կամ նկարում, միաժամանակ և՛ կխաղա, և՛ կսովորի:

Խնայում է ժամանակը: Աուդիոգրքի օգնությամբ երեխան կարող է առավոտյան նախաճաշի ժամանակ լսել երեկվա անցած նյութը՝ կրկնելով այն: Դա սովորեցնում է իրեն նաև ռացիոնալ օգտագործել ժամանակը՝ գնահատելով օրվա յուրաքանչյուր րոպեն:

Հարստացնում է բառապաշարը: Նույնիսկ եթե դուք էլ քսան անգամ կարդացել եք երեխային «Կոշկավոր կատուն», աուդիոգրքում նա կլսի իր համար ինչ-որ նոր բան, իհարկե՝ բառերի տեսքով: Միշտ չէ, որ երեխան հեքիաթ է լսում: Դա կարող է լինել պատմվածք, հանրագիտարանային հոդված, գրավիչ արկածներ կամ ցանկացած այլ նյութ.... Գրքից երեխան կարող է ստանալ բազմաթիվ նոր տեղեկություններ և միաժամանակ հարստացնել իր բառապաշարը:

Օգնում է շփմանը: Երկար պատմվածքները ձևավորում են երեխայի ընկալելու ունակությունը, մինչև վերջ՝ առանց զրուցակցին ընդհատելու (ինչը բացակայում է շատերի մոտ) լսելու կարողությունը, իսկ անձնական և գործնական հարաբերությունների կարգավորման գործընթացում դա մեծ դեր ունի:

Գիրքը՝ դայակ: Աուդիոգրքի ունկնդրմամբ կարելի է զբաղեցնել երեխային այն ժամանակ, երբ մեծահասակը զբաղված է: Նույնիսկ հաշվի առնելով, որ դա լավագույն լուծումը չէ, այն հեռուստացույց դիտելուց շատ ավելի օգտակար է:

Հարմար է օգտագործման մեջ: Կան բազմաթիվ իրավիճակներ, երբ հնարավոր չի լինում գիրք կարդալ. ճանապարհին (մեքենայի թափահարման ժամանակ), կարդալու արգելքներ (երեխան անցնում է ակնաբուժական փուլ), զբաղված ձեռքեր (օրինակ՝ միասին կարկանդակներ եք պատրաստում, բայց դեմ չեք լինի միաժամանակ հեքիաթ ունկնդրել): Ի վերջո, պատահում է, որ երեխան ուղղակի չի սիրում կարդալ, որովհետև դա պահանջում է տոկունություն, նստակյացություն, իսկ ինքը դեռ շատ փոքր է և չափազանց շարժուն: Բացի այդ, MP3 նվագարկիչը քիչ տեղ է զբաղեցնում և հարմար է ցանկացած տեղ, և երեխան միշտ կգտնի՝ ինչով զբաղվել:

Շատ մասնագետներ կարծում են, որ աուդիոգրքերը ևս մեկ քայլ են կաղապարներ, մտածողությունը կաշկանդող միջոցներ ստեղծելու ճանապարհին: Գրքի ընթերցումը յուրօրինակ ճանապարհորդություն է, զրույց է ընթերցողի և հերոսների միջև, հույզերի ու զգացումների անկեղծ արտահայտում է, և ամեն ընթերցող դա անում է յուրովի, առանձնահատուկ ձևով: Ընթերցելիս դու ոչ միայն ընթերցող ես, այլ նաև համահեղինակ, ռեժիսոր, բեմադրող.... Աուդիոգրքերի դեպքում դա հնարավոր չէ, քանի որ ամեն ինչ կարծես ի սկզբանե որոշված է:

Այնուամենայնիվ աուդիոգրքերի օգտագործումը չի արգելվում, ցանկալի է դրանք օգտագործել միայն կրտսեր տարիքում:

Ուսուցիչները հաճախ են կիրառում աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, որոնց միջոցով սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել: Ինչ է իրենից ներկայացնում <<ինքնուրույնություն>>ն <<ինքնուրույն աշխատանք>> արտահայտություններ : Ինքնուրույնությունն անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև: Սրանց միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը արդեն ձեռք բերած ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության՝ որպես անհատի որակի ձևավորմանը:

Ինչպես դպրոցում, այնպես էլ ոգջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործնթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այնպիսի արդյունքի, որ երեխաները խորապես յուրացնեն դասակարգությունները, օրինաչափությունները: Հարկավոր է դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության համար:

Փորձը ցույց է տալիս.

1.Պարբերաբար անցկացնելով ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանք. սովորողներն սովորել խորքային և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում քան դա կարող է լինել ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:

2. Ըստ դիտակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

3. Արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, մշակվում են ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողություններ:Ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք:Այն ներառում է հինգ հիմնական փուլեր.

1.կազմակերպչական

2.նախապատրաստական

3.կողմնորոշիչ

4.հիմնական փուլ

5.ամփոփիչ փուլ

Երտսեր դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա կարդալ և հասկանալ գրավոր առաջը,հաղորդակցվել մայրենի լեզվով, ընկալել ուրիշի խոսքը, արտահայտել սեփական մտքերը: Կարդալու կարողությունը թույլ է տալիս տեսնել, ընկալել երևույթներն ու առարկաները: Ընթերցել կարողանալը մեծ ազդեցություն ունի անձի ձևավորման և զարգացման վրա: Աշխ-

կելով և իրականացնելով մեթոդների և գործառույթների բազա՝ ընթերցանության ուսուցումը դառնում է առավել արդյունավետ:

Կարդալու կարողությունների զարգացման լավագույն միջոց է ինքնուրույն ընթերցանությունը: Արտադասարանային ընթերցանության դերը մեր օրերում արդիական հնչողություն ունի, քանի որ մատաղ սերունդը համակարգիչը գերադասում է գրքից: Երեխաներին գրքին կապելու աշխատանքը պետք է սկսել դեռևս գրաճանաչության շրջանից:Որպես միջոց՝ արդյունավետ է արտադասարանային ընթերցանության ճիշտ կազմակերպումը: Երեխան պետք է հայրենվի գրքերի կախարդական աշխարհում և կապվի գրքին: Կարդացած նյութը պետք է լինի բարմանալի, հրաշալի, հեքիաթային: Որոշ դեպքերում թեմատիկ առումով ինքնուրույն ընթերցանության նյութերը կարող են համապատասխանել դասագրքի նյութերի ընդհանուր թեմաներին կամ թեմատիկ խմբերի հիմնական ուղղություններին, որպեսզի նպաստեն ուսումնասիրվող նյութերի ավելի խոր յուրացմանը:Որպես հնար կարելի է օգտագործել բարձրաձայն կարդալը, ամենակարևոր գործոններից է հասկանալով կարդալը:Այս դեպքում նա կարդում՝ է աճույթով, ուզում է իմանալ պատճառահետևանքային կապերը, ուրախանում է գտածով: Այս դեպքում կարդալը դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց:Նպատակը դառնում է ընկալումը, իսկ կարդալը՝ պայման: Հասկանալով կարդալու կարողության ձևավորման համար կարելի է կիրառել բացատրական ընթերցանության մեթոդը:Ճիշտ կարդալուն նպաստում են լեզվական գիտելիքները և բարձրաձայն ընթերցանությունը:Սահուն կարդալու համար՝ բազմակի ընթերցանությունը, բարձրաձայն և շշուկով կարդալը:Արտահայտիչ կարդակուն նպաստում են կետադրական նշանների գործածությանը տիրապետելը ոչ միայն գրելիս, այլև ընթերլելիս, դերային ընթերցումները, բեմականացումները:Ձևավորելով և զարգացնելով կլարդալու կարողությունները՝ ինքնուրույն ընթերցանությունը կատարում է նաև այլ գործառույթներ. Խոսքի զարգացում, երևակայության զարգացումը, մտածողություն,ուշադրություն, հիշողության զարգացում:

Ընթերցանություն զույգերով. Ըմբռնման հմտությունները զարգացնելու նպատակով ընթերցելիս աշակերտները կարող են օգտվել <<Զույգերով ընթերցում>>մեթոդից: Աշակերտներից մեկը արդում է մի պարբերություն և բարձրաձայն ամփոփում: Մյուս աշակերտն այդ պարբերության ասին հարցեր է տալիս:Հետո նրանք փոխվում են դերերով: Երկրորդ աշակերտը կարդում է հաորդ պարբերությունն՝ առաջինն է հարցեր տալիս: Հիշյալ մեթոդը շփման եզր ունի կոլեկտիվ ուսուցման մեթոդների հետ:

Հատմության քարտեզ. Այս մեթոդի նպատակն է օգնել կենտրոնանալ պատմության, պատմաածքի կարևոր բաղադրիչների վրա, ներառյալ՝ միջավայրը, կերպարները, կոնֆլիկտը և խնդրի ուծումը:Ուսուցիչը գծում է պատմության քարտեզը պաստառի վրա և առաջադրում է օգտագործելով կարդացածը՝ գտնել բաղադրիչները և գրի առնել պաստառի վրա:

ուսանողները կարող են օգտագործել քարտեզը հաջորդ անգամ որևէ պատմություն կարդալիս՝ ճանաչելու համար հիմնական բաղադրիչները:Պատմության քարտեզները օգտակար են նաև ընթերցելուց հետո ինքնուրույն կամ խմբային աշխատանք կատարելու համար:

Երպարների ցանց.Այս դեպքում պատմվածքի հերոսի անունը գրվում է ցուցադրության մեջտեղում և վերցվում շրջանակի մեջ:Հետո այն բառերը, որոնք նկարագրում են այդ անձին, այդ անձն բնութագրիչները, արբանյակների տեսքով գրվում են նաև անվան շուրջ: այնուհետև յուրաքանչյուր հատկանիշը պարզաբանող օրինակները արբանյակների տեսքով գրվում են նկարագրական բառերի շուրջ:



Երկակի գրառումների օրագիր. Ընթերցելուց հետո էջի մի հատվածում նշում են այն դրվագը , որը, իրենց կարծիքով, ամենակարևորն է: Իսկ մյուս մասում մեկնաբանում են, թե ինչու են այդ հատվածը կարևորում, ինչու է այդ հատվածը գրավել իրենց ուշադրությունը, ինչի մասին է մտածել տալիս:Կարելի է ստեղծել համագործակցային խմբեր՝ կարդացածը ներկայացնելու նպատակով: Խմբի յուրաքանչյուր անդամ կարող է ունենալ որևէ դեր՝ գրանվող, ստուգող, զեկուցող, ամփոփող, ընթերցող և այլն:

Եզրակացություն

Ուսումնասիրելով «Ընթերցանության կարողության ձևավորման մեթոդները» թեման, հասկացանք, որ ընթերցանության կարողության ձևավորման վերը նշված մեթոդները կիրառելի են, բայց չպետք է հրաժարվել ավանդական մեթոդներից: Ամենակարևորն այն է, որ երեխան ցանկացած տարիքում սիրի գիրքն ու կարդա այն առանց մեծերի թելադրանքի:

Մենք չենք կարող հաշվի չնստել այն փաստի հետ, որ այսօրվա երեխաները թվային դարաշրջանի բնիկներ են, հետևաբար և՛ ուսուցման ընթացքում, և՛ առօրյա կյանքում պետք է կիրառենք տեխնիկական տարբեր միջոցներ: Աուդիոգիրքն, անկասկած, ունի կարևոր առավելություններ, սակայն այն ընթերցանության լրացումն է, ոչ փոխարինումը: Անպայման պետք է գիրք կարդալ երեխայի համար, երբ նա դեռ փոքր է, և հետևել, որ երեխան ինքը կարդա գրքեր, երբ արդեն դպրոցական է:

Օգտագործելով տարաբնույթ հնարներ, մեթոդներ ու ակտիվ վարժություններ՝ ուսուցիչների խնդիրն է ձևավորել այնպիսի ընթերցողներ, որոնք կարողանան կարդալու ընթացքում ձեռք բերած գիտելիքները իմաստավորել, օգտագործել, զարգացնել ակտիվ և խոհուն ընթերցող լինելու կարողություն: Հարկավոր է սովորեցնել նաև կարդալ՝ սոսկ բավականություն ստանալու համար: Պետք է հասնել այն բանին, որ պարզունակ մտապահման փոխարեն աշակերտները տեքստը ենթարկեն քննության և կատարեն բազմաբնույթ առաջադրանքներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ հր. 2006:
2. Հանրակրթության պետական չափորոշիչ (Հաստատված 28.07. 2011), 33 էջ:
3. Մանկավարժություն 7.2010, ՀՀ ԿԳՆ ԿԱԻ, Երևան:
4. Մանկավարժություն 4.2012, ՀՀ ԿԳՆ ԿԱԻ, Երևան:
5. Մանկավարժություն 1.2014, ՀՀ ԿԳՆ ԿԱԻ, Երևան:
6. Սկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը: Երևան, 2011:
7. Նախաշավիղ 7-8.2001,Գիտամեթոդական հանդես, ՀՀ ԿԳՆ ԿԱԻ, Երևան:
8. Նախաշավիղ 3-4.2009,Գիտամեթոդական հանդես, ՀՀ ԿԳՆ ԿԱԻ, Երևան:
9. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա,Երևան, 1980:

Դասի թեման

Հին դաս - «Պարահանդես անտառում»
Նոր դաս - «Տերևաթափ»

Մ/Գ Երաժշտություն /Տարվա չորս եղանակները - Չայկովսկու/

Թեմայի հետ կապված խնդիրներ և նպատակներ

ա/ Անցած նյութի ամրապնդում
բ/ Բանավոր խոսքի զարգացում
գ/ Բառապաշարի հարստացում
դ/ Սեր դեպի բնությունը
ե/ Նկարագրել աշնան սկիզբը, բերքառատ աշունը, խոր աշունը
զ/ Զարգացնել գեղեցիկը ընկալելու և զգալու կարողություն:

Կահավորում - Աշունը պատկերող նկարներ, տերևներ, գունավոր մատիտներ, սոսինձ
Աշնան բարիքներ /մրգեր, բանջարեղեն/

Ուղերձ - /նախօրոք գրվել է պատկերակալի վրա/
1. Եղանակը դրսում:

ա/ *Խթանման փուլ*

Թեման կարդալ 2 անգամ: Առաջադրանք յուրաքանչյուր խմբին
1. ա/ Կարդալ ուրախ տողերը:
բ/ Տխուր տողերը:
գ/ Բառակապակցությունները
դ/ Բնությունը նկարագրող տողերը:

2. Նկարագրել աշունը դիպուկ բառերով և արտահայտություններով:
3. Ինչ փոփոխություններ են կատարվում աշնանը բնության մեջ:
4. Ինչ տրամադրություն է առաջացնում աշունը /տխուր, ուրախ, ինչու՞

բ/ *Իմաստի ընկալման փուլ*

1. Թեմայի մեջ ո՞րն էր իրականությունը և ո՞րն էր հորինվածը:
2. Դուրս բերել հենակետային բառերը:

գ/ *Կշռադատման փուլ*

1. Նոր սովորած բառերը և բառակապակցությունները գրել գրատախտակին:
2. Հանելուկ
Օրն է կարճանում,

Անձրև է մաղում,
Քամին է խաղում,
- Այդ ե՞րբ է լինում:

դ/ *Գիտելիքների ամրապնդում*

Աշխատանք կենտրոններով

1. Մաթեմատիկայի
2. Հայոց լեզվի
3. Նկարչական
4. Ստեղծագործական
5. Բնագիտական

Ապլիկացիոն աշխատանք

1. Ի՞նչ եք զգում:
2. Ի՞նչ եք տեսնում:
3. Ի՞նչ եք լսում:

Գովերգեք աշունը:

Կարդալ տալ հորինված բանաստեղծությունները աշնան մասին:

Նոր նյութի հաղորդում

1. Ի՞նչ եք կարծում տերևները ինչու՞ էին տխուր երգեր սվսվում:
2. Տերևաթափի /Հ. Թումանյան/ անհրաժեշտությունը:
3. Կարդալ «Տերևաթափը» ոտանավորը:

Կարդալ տալ աշակերտներին երկու անգամ:

Բացատրել

1. վառ ծիրանի –
2. խայտաբղետ –
3. նախշուն-նախշուն –
4. մայրենի –

Գրել բառատետրերում.
տերևաթափ, թռչել, ճյուղ, փախչել, նախշուն, երգեր, հագնել

հոմանիշ, հականիշ՝

երանգ - գույն
սիրուն – տգեղ

Նոր բառ կազմել

ձմեռ – երգ -
տերև - թև -

Հանձնարարություն

Անգիր սովորել
Պատրաստվել ինքնաթելադրության
Տն. աշխ. էջ 66 վարժ. 7

Բ Մ Տ (բազմաբնույթ մտածողության տեսություն)

ՊԼԱՆ

Դասարանը՝ - առաջին
Առարկան՝ - մաթեմատիկա
Թեման՝ - երկնիշ թվերից կլոր տասնյակի և միավորի հանում:

Նպատակը՝ 1. Ուսուցանել երկնիշ թվերից կլոր տասնյակի և միավորի հանման դեպքերը :

2. Տրամաբանության զարգացում /երկրաչափական պատկերներ՝ ուղղանկյուն, քառանկյուն, խնդիրներ և վարժություններ:

Կահավորում՝ Ուղղերձ ուսուցչի համար.
Ողջույն մաթեմատիկոսներին :

Նոր նյութի վերաբերյալ ունենալ պլակատներ, օրինակներ, նմուշներ թեմայի վերաբերյալ, երկրաչափական պատկերների պլակատներ:

Ընթացքը՝

1. Առավոտյան ուղերձ, նորություններ
   - Նախորդ օրվա նորությունների մասին /հաճելի, տհաճ/
   - Գրատախտակին գրում եմ ամիս ամսաթիվ
   - Տարվա որ եղանակն է
   - Գարնան որ ամիսն է
   - Գարնան ամիսներն որոնք են
   - Շաբաթվա որ օրն է
   - Շաբաթը քանի օր ունի
   - Ամիսը քանի շաբաթ ունի

2. Տնային աշխատանքի ստուգում / ֆրոնտալ, անհատական/
Դասարանը բաժանվում է 4 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր աշակերտ իր տետրը փոխանցում է իրենից աջ գտնվողին: Առաջին քայլում ստուգվում է 1 –ին առաջադրանքը: 2- րդ փուլում տետրերը փոխանցվում են նորից դեպի աջ՝ ստուգվում է 2- րդ առաջադրանքը : Եվ այսպես հաջորդաբար փոխանցելով ստուգվում է բոլոր առաջադրանքները /կառուսելի մեթոդը/:

3. Բանավոր հաշիվ
խմբերը միմյանց ուղղում են հարցեր.
   - որո՞նք են գումարման բաղադրիչները
   - որո՞նք են հանման բաղադրիչները

- որո՞նք են միավորները և տասնավորները
- որո՞նք են անվանական թվերը /մ, դմ, սմ/
- անվանել թվի նախորդ, հաջորդ, հարևան թվերը
- կազմել խնդիրներ և լուծել +, -, ավելի պակաս բառերը օգտագործելով, ինչպես նաև հակադարձ խնդիրներ:

4.Հին նյութի ամփոփում - 50+23, 23+50

Նոր նյութի հաղորդում՝ խմբային աշխատանք պրոբլեմային մեթոդով: Խմբերի ներկայացումներից հետո աշակերտների օգնությամբ փորձում ենք կատարել եզրահանգումներ , որը բացատրվում է դիդակտիկայի միջոցով, այն ցուցադրվում է երեխաներին, այնուհետև գրանցվում գրատախտակին :

36-20
/30-20/+6=16
36-20=16

30 6

36-2
30+/6-2/=34
36-2=34

30 6

5. Քարտային աշխատանք

Խմբերին բաժանվում է քարտեր, որտեղ տրված է նոր նյութի ամրապնդման համար վարժություններ.

56 – 55 = 1
79 – 4 = 75
46 – 2 = 44
38 – 73 = 1

95 – 40 = 55
71 – 20 = 51
58 – 10 = 48
46 – 30 = 16

Յուրաքանչյուր խմբին տրվում է մեկ քարտ, իսկ նրանցից մեկը այն գրում է գրատախտակին և լուծում

1. Տրամաբանական – մաթեմատիկական մտածողություն

Փոստատարը նամակներ է բերում և բաժանում յուրաքանչյուր խմբին, որտեղ կան տրամաբանական խնդիրներ, վարժություններ: Խմբից մեկը ներկայացնում է բովանդակությունը և ամբողջ դասարանն է պատասխանում:

Յուրաքանչյուր պատասխանների, ակտիվության համար խումբը թիմը ստանում է միավոր՝ որպես գնահատման ձև:

<u>Նամակների բովանդակությունը</u>

ա/ Ո՞ր թիվն է «ավելորդը» և ինչու՞
1/ 1, 4, 5, 7, 14, 9
2/ 22, 44, 55, 56, 77

բ/ Ո՞ր թիվն է «ավելորդը» և ինչու՞
1/ 4, 5, 7, 9, 15